

նետեւում ըլլաս, ջուրը կըրածնէ կը
ծածանի ու իր կեդրոնէն կը հեռա-
նայ, ասանկ ալ ձայնը օդին շարժմամբ
բը կամ ծածանմամբը ելած մարմինն
կը տարածուի չորս բոլորը:

Փորձով տեսնուած է որ չոր սառու-
ցի աստիճան ցրտութեան ատեն ձայ-
նը մէկ մանրերկրորդի մէջ գրեթէ 360
մեթր տեղ կը վազէ, ու մէկ ժամուան
մէջ 255 փարսախ տեղ: () Դին խո-
նաւութիւն, մառախուղն ու անձրեւը
ձայնին ընթացքին արգելք կ'ըլլան,
և նոր եկած ձիւնը շատ աւելի: Լնդ-
ղիացի զօրապետ մը որ Լմերիկայի
ետքի պատերազմին մէջ մտեր էր,
զարմանալի դիպուած մը կը պատմէ
աս բանիս վրայ: Լնդղիացիք ու Լմե-
րիկացիք գետի մը երկու կողմը բա-
նակեր էին կ'ըսէ. բայց աս գետը ա-
նանկ նեղ էր որ Լմերիկացւոց յառա-
ջապահ գունդին մէջ եղած մարդիկը
որոշ կը տեսնուէին: Սմբկահար զի-
նուորներէն մէկը թմբուկը ձեռքը ա-
ռած կը զարնէր. զօրապետը կը տես-
նէր անոր ձեռու ընկերուն շարժմունքը,
բայց թմբուկին ձայնը չէր լսէր. պատ-
ճառը ան էր որ նոյն օրը ձիւն եկեր
էր, ու բոլոր գետինը ծածկած ըլլալով
թմբուկին ձայնը կը խափանէր:

Լս բանիս հակառակը կը պատահի
թէ որ իջած ձիւնը պնդացած ըլլայ,
կամ գետինն երեսը սառած ըլլայ:
Փորձուած է որ գետինը սառած ժա-
մանակ՝ մարդուս ձայնը մէկ փարսա-
խէն աւելի հեռու տեղ կ'երթայ:
Երբոր գետինը չոր ու պինտ է ու տա-
կը քարուտ, ձայնը շատ աւելի հե-
ռուն կը տարածուի: Պատերազմի ա-
տեն մարդիկ հեծելագունդին մօտե-
նալը իմանալու համար՝ ականջնին
գետինը դնելով մտիկ կ'ընեն: Սմբա-
նութիւն ձայնը երբեմն ինչուան քառա-
սուն փարսախ տեղէն կը լսուի:

Երբոր ձայնը շիտակ մակերևութի
մը զարնուելով կ'արգիլուի, զոր օրի-
նակ պատի մը, ժայռի մը և կամ բըլ-
րակի մը, մակերևութէն կը ցլանայ
ու ետ կը դառնայ, ինչպէս որ լոյսը


հայլին երեսէն կը ցլանայ: () որ օ-
րինակ, թէ որ մէկը ժայռի մը դի-
մացը կենայ հազար ոտք հեռաւորու-
թեամբ, ու ատրճանակ մը պարպէ,
ձայնը ինչուան ժայռին հասնելու հա-
մար մէկ մանրերկրորդ պէտք է. ժայ-
ռին երեսէն անդրադառնալու հա-
մար մէկ մանրերկրորդ մըն ալ պէտք
է, անանկ որ ատրճանակը պարպելէն
ետքը երկու մանրերկրորդէն արձա-
գանգը կը լսուի:

Արձագանգը որոշ լսելու համար
պէտք է որ դիտողը կեցած ըլլայ պա-
տին կամ արձագանգ տուող մակե-
րևութին մէջտեղը: Սուտքութի
պարտէզին արձագանգը մէկ բառը 17
անգամ կը կրկնէ ցորեկ ատեն, իսկ
դիշերը 20 անգամ: Խիստ երևելի
արձագանգներէն մէկն է Սոգնիրինը
Լնդղիայի մէջ. ու թը կամ տասը փո-
ղով հնչուած խաղերը ճիշդ կը կրկն-
ուին, բայց աւելի ցած ձայնով մը,
քիչ մը ատենէն նորէն կը կրկնէ ա-
ւելի նուաղ ձայնով, իսկ երրորդ ան-
գամուն աւելի տկար: Սորիշ անգամ
կը ստորագրենք Սիմոնեթ թայի ար-
ձագանգը:

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Կոհորտիւ:

ԿՈԿՈՐԴԻԼՈՍԸ մողէսի տեսակ կեն-
դանիներէն մէկն է, ու ինքն ալ չորս
հինգ տեսակ է, ու այլեւայլ երկիրներ
կը գտնուի: Սուր մարմինը կարծր թե-
փով պատած է. կունդկին վրայիններն
ու փորուն տակինները աւելի խոշոր ու
կլոր են. պոչը երկու կողմէն տափակ
է, ու վրան ակռայի պէս փուշեր կան.
առջևի թաթերը հինգ հինգ ճանկ
ունին, ետե ինները չորս չորս. ցուկը
երկայն է, բերանը խիստ մեծ, ար-
տեանունքն ալ կնճռած ու ցրցուած
են: Լսենով կը կարծուէր թէ կո-
կորդիլոսը լեզու չունի. բայց հիմա



Կոկորդիլոս :

ստուգուած է որ կարճ լեզու մը ունի, որ վարի ծամելիքին գրեթէ կպած է :

Կոկորդիլոսը սոսկալի գաղան մըն է, որուն նմանը սողնոց ցեղին մէջ չկայ . և գիշերահաւասարներու տակ եղած անոյշ ջրերուն մէջի ամենէն կատաղի գաղանն աս է : Սողուններուն մէջ ամենէն անգուլթ, միանգամայն ամենէն ալ շատ ապրողն է . վասն զի ինչուան 100 տարի կ'ապրի, թէսկէտ ոմանք աւելի ալ կ'ըսեն : Բնփրկիկէի մէջ տեղեր կան որ խիստ մեծ կոկորդիլոսներ կը գտնուին՝ ինչուան 30 ոտնաչափէն աւելի . ասոնք սովորաբար գետերու քով եղէգնուտներու մէջ կը բնակին : Հին աշխարհի կոկորդիլոսները ոչ երբէք ծովու ջրի կը մօտենան . իսկ նոր աշխարհիները, այսինքն Բրազիլիայի կոկորդիլոսները մեծ գետերուն բերանը կ'երթան, ու

նաև բաւական հեռաւորութիւն տեղ ծովու մէջ մէկ կղզիէն մէկալը կ'անցնին . և ահա աս է երկու տեսակ կոկորդիլոսներուն իրարմէ ունեցած գլխաւոր տարբերութիւնը :

Հին ատենը Եգիպտացիք կը պաշտէին ասիկայ, ու կռատուններուն քովը մեծամեծ աւազաններու մէջ կը մեծցընէին . առջևը զոհեր կ'ընէին, ու տօնի օրեր թափօրով կը պըտըտցընէին : Կոկորդիլոս գտնուած տեղերուն բնակիչները շատ վախ կը քաշեն աս ահագին ու անգուլթ գաղանէն . աղէկ որ գլուխը ասդին անդին չկրնար դարձընել՝ առանց ամբողջ մարմինն ալ շարժելու, ցամաքին վրայ ալ չկրնար շուտ քալել, անանկ որ մարդ գիւրաւ կրնայ փախչիլ ազատիլ : Կարծես թէ կոկորդիլոսներն ալ գիտեն որ ջրէն դուրս ոյժ չունին, ուս-

տի մարդ մը տեսնելուն պէս մէկէն ջուրը կը մանեն : Վարդինայի սեւերը կացիններով կը սպաննեն կոկորդիլոսը , ու պոչը ախորժեւով կուտեն : Անեկալի երկիրը որսորդներ կան որ երբոր կոկորդիլոսին վրայ կ'երթան , անիկայ իրեն լայն կոկորդը բանալուն պէս՝ կոկորդին մէջ երկու ծայրը սուր երկաթ մը կը խոթեն , որով չկրնար բերանը գոցել , ետքը կը սպաննեն . և ապա հովու թեան համար առաջուց աջ թևերնին հաստ կաշիով մը կը պըլլեն : Այ է ան մարդուն որ ջրին մէջ կոկորդիլոսի ձեռքը իյնայ . և սակայն յանդուգն որսորդներ կը գտնուին որ ջրին մէջ ալ լողալով կ'երթան , կոկորդիլոսին փորը դանակ կը խոթեն ու կը սպանեն :

Կոկորդիլոսին շատնալուն մեծ արգելք են ամէն տեսակ օձերը՝ որ անոր անհամար հաւկիթները կը կոտորեն ու կ'ուտեն . թէ որ աս արգելքը չըլլար , բոլոր Վերիկէն կոկորդիլոսներով կը լեցուէր : () Զերէն զատ՝ գիշատիչ թռչուններն ալ թշնամի են կոկորդիլոսին , մանաւանդ անգղը՝ որ շատ կը սիրէ ասոր հաւկիթները . անոր համար անգղները մէկտեղ ժողովուած կը սպասեն ան միջոցին որ կոկորդիլոսը ծովէզերքը կուգայ հաւկիթները կ'ածէ , որ 50^{էն} ինչուան 60 հատ կ'ըլլան , ետքը աւազով կը ծածկէ ու անանկ կը թողու որ արևուն տաքութենէն ձագերը ելլեն : Ինքը ջրին մէջ մտնելուն պէս՝ անգղները մէկէն կը թափին , ու բոլոր հաւկիթները կ'ուտեն կը լմնցընեն : Արսեն թէ նոյն իսկ արու կոկորդիլոսն ալ ծերանալէն ետև իր ձագերը կ'ուտէ՝ երբոր մայրերնին զանոնք նոր ջուրը կ'իջեցընէ . ասանկով հետ զհետէ կոկորդիլոսի ցեղը ջնջուելու վրայ է : Գլխաւոր թշնամիներէն մէկն ալ Փարաւոնի մուկն է , որուն վրայ զատ խօսեցանք :

Հոս ! ասէփէտ անունով անուանի բնագէտին խօսքը դնենք որ կ'ըսէ . « Կոկորդիլոսը արծիւէն ու առիւծէն ալ մեծ է՝ որ օդին ու ցամաքին

կատաղի թագաւորներն են . և թէ որ փիղը , ձիագետին , կէտը և մէկ քանի օձերը մէկգի առնենք՝ աշխարհիս մէջ կոկորդիլոսին պէս սոսկալի գազան չգտնուիր : Կոկորդիլոսին գրեթէ բոլոր մորթը մանր մանր վահաններով պատած է , որով ոչ թրէ կը վաննայ՝ ոչ կասարէ գնատակներէ . տեսքն ալ խիստ զարհուրելի է , մանաւանդ նայուածքը . ահագին բերանը կարծես թէ անդունդ մըն է՝ սոսկալի ակռաներով . իրեն դանդաղ դանդաղ քալուածքն ալ մարդուս աւելի սոսկում մը կը բերէ , միայն թէ անօթի չեղած ատենը ուրիշի փնա չընեն » :

Երա՛ :

() ԻԹՈՒՐՆԵՐԸ երկու ցեղ կը բաժնուին ընդհանրապէս . մէյմը ցորեկուան թիթեղներուն թրթուրները , մէյմըն ալ գիշերայինները . ասոնք աւելնքն ալ զատ զատ յատկութիւններ ունենալուն համար դարձեալ այլևայլ տեսակ կը բաժնուին : Երանց մէկ տեսակն ալ շերամն է , որ ուրիշ թրթուրներու պէս իրարու մէջ անցած զանազան օղակներով ձևացած է . ոտքեր ու մանր ճանկեր ալ ունի , ու անոնցմով ուր որ ուզէ կը կպչի կը կենայ : Իւրնին մէջը երկու կարգ ակռայ կայ , որ մեր ակռաներուն պէս վեր վար չեն շարժիր , հապաքովընտի . ասոնցմով իր ուտելու տերէնները կը ձգմէ կը կտրէ ու կը ծակէ : Ինչոր մարմնոյն երկայնութեամբը կունըկի մաշկին տակը խողովակի պէս գործարան մը կայ , որ ատեն ատեն կ'ուռի , ու իրեն սրտի տեղ կը բռնէ : Իրկու կողերուն վրայ իննական հատ ծակեր կան , որ թոքի տեղ կը գործածէ . վասն զի անոնցմով դրսի օդը կը ծծէ , ու ասոնց ուռելովն ու ցածնալովը մամացը կամ սննդարար հիւթը որդին մարմնոյն մէջ կը պտըտի : Իւր-